

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԿԵՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ



ՅՐ աւուր վրայ ծաղկոցք, դպրոցք և վարժարանք կը բազմանան յազգիս, ազգային մանկանց մտաւոր զարգացման խանձարուրդը լինելով. օր աւուր՝ մայրենի լեզուին իբրեւ կատարելութեան գործիններ՝ կը տպագրուին և սփռուին այդ յիշեալ հաստատութեանց համար անթիւ այբբենարանք, ընթերցարանք, քերականութիւնք և բառարանք։ Այս ամէնն ալ կարեւորք և օգտակարք են. և չեմ կարծեր որ գտնուին այդպիսի եռանդուն գործունէութեան պարսաւադէտք, որք (եթէ գտնուին ևս) իրենք զիրենք նախատած պէտք է համարին այդու իսկ գործով։ Բայց, ըստ առածին, շատ անգամ մեծամեծ և բարձրագոյն ձեռնարկներու՝ եռանդեամբ հետամուտ եղած ժամանակ, երբեմն երբեմն (որպէս զի չըսեմ՝ յաճախ անգամ) կարծես փոքրագոյն կամ նուաստագոյն այս ինչ այն ինչ առարկայն մտքէ կը հանենք. և սակայն 'ի տեսականին այդ մանրագոյն, այդ խոնարհայն համարուածներն, որք սաւէպ կը վրիպին մեր ուշադրութենէն, 'ի գործնականին մեծամեծ անտեղութեանց պատճառք կը լինին։

Հայ լեզուի կէտադրոշխնք։ Այո, փոքրիկ իրաց վրայ է խօսքերնիս, այլ պէտք չէ արհամարհենք. մանաւանդ որ այդ փոքրիկն հին ոչ են իբր և գոյացութիւնք, այլ պիտի՝ իրադործին մեր ձեռք, մենք պիտի լինինք նոցա արարիչն։

Հայ լեզուի կէտագրութիւնն գլխաւոր չորս կէտերու մէջ պարուհանուած է, որք են 'ի մանկութենէ մեղի ծանօթ՝ իրենց յատուկ ձևերով՝ քոչք, ստորակէտ, միջակէտ և վերջակէտ։ Գլխաւոր կ'ըսենք, վասն զի ուղղագրութեան միւս նշաններն ևս, որք են փակագիծք, չակերտք, ենթամնայք, հարցականք, դարմացականք, յետք, և այլն, անբաժան են վերոյիշեալ չորս կէտերէն, և նմանօրինակ նշանաւոր կը ծառայեն, այսինքն է՝ իմաստից լաւ հասկացողութեան։ Առաւել քան այս վերջիններս՝ առաջին չորս կիտանշանքը կը փափաքինք հայ մանկանց, պատանեաց և նաև ոչ սակաւ զարգացելու և մատենագրաց անգամ ուշադրութեան առարկայ դարձնել։

Շատ անգամ կը հանդիպի, զոր և փորձով իսկ տեսած եմ, որ երբ այդ կէտերուն միոյն և կամ միւսոյն վրայօք փոքր ինչ պահանջ, փոքր ինչ խստութիւն բանեցընէ հայ լեզուի ուսուցիչն, ոչ սակաւ յաշակերտաց զգալի կերպով իրենց չիմաց գծագրութեամբ՝ զարմանաց զգացումն կը յայտնեն, իբրև թէ խորհրդածէին. և երբեք

այդքան փոքրիկ, այդքան աննշան, այդքան չնչին բանի համար այդչափ հոգ տանել, այդչափ նեղուիլ: Միջակէտ մի՛ ստորակետի տեղ, վերջակէտ մի՛ միջակետի տեղ և կամ փոխադարձն դրուելով, և թէ բառ մի առաջ և կամ բառ մի վերջը դնելով բուլթ մի, և թէ այս ինչ տեղ պակաս, և այն ինչ տեղ աւելի դնելով կէտ մի՛ ինչ վնաս յառաջ կու գայ. միթէ հարկ է այդքան մանրախոյզ մանրախնդիր լինել: Ոչ, է յաճախ՝ այսօրինակ պարագայից մէջ՝ ուսանողաց մտածածն ուշիմ վարժապետին նկատմամբ. զոր երբեմն նաև բերանացի ևս յայտնելու կը համարձակին: Եւ սակայն այդ փոքրիկ ուսանողներն են, որ հասակաւ և մտօք զարգանալով՝ օր մի յասպարէզ հրապարակական գրութեան պիտի թևակոխեն, պիտի դառնան յեղափոխին՝ ի լրագրապետս, ի խմբագրապետս, ի մատենագիրս, և այլն. նոցա մտքերն պիտի յղանան գեղեցիկ և փափուկ, սրտաշարժ և վսեմ իմաստներ, նոցա երևակայութիւնն իրենց աշխոյժ պիտի բորբոքէ՝ այդ մտաւորական մասնական իմաստներն՝ իրարոք հետ զօդելու և ի թղթի գրոյմել՝ զայնս այլոց ևս հաղորդելու նպատակաւ... Բայց, աւաղ, ձեռք առէք նոցա լրագրաց մէջ զետեղած յօդուածները, նոցա ուսումնական հանդէսներու մէջ հրատարակած բանասիրական, իրաւաբանական, գիտական, բժշկական, քննադատական, քերթողական, արուեստաբանական գրուածները, նոցա ուսումնասիրած մատենագրական, աշխարհագրական, հնախօսական գրքերը... պիտի գտնէք արդարև ընտիր դարձուածներ, գողտրիկ բացատրութիւններ, ոսկեղէն լեզու, աղամանդեայ հանճար, գոհարանման յարգ ունեցող հմտութիւնք. բայց ինչ օգուտ որ դուք նոցա մտաւորական այդքան մեծամեծ ձիրքերու հաղորդ պիտի չկարողանաք լինել. և պիտի բռնադատուիք, երբեմն զայրոյթ անգամ ըզգալով, մէկդի ձգել այդ հրատարակութիւններն, և զուշել. « Մեղք որ շատ մուլթ է, մեղք որ մատենագրին համար միայն հասկանալի է, միով բանիւ, մեղք որ չհասկըցուելու կամ ձանձրոյթ պատճառելու նպատակաւ կարծեմ գրուած է... »: Մի՛ վշտախոր, երկայնամիտ ընթերցող. բայց վերստին այդօրինակ գրութիւնները. փորձէ ստորաւ կէտ մը՝ միջակէտի վերածել, բուլթ մի՛ ստորակետի դարձնել, պակաս տեղերը կիտադրել, առանց կէտերու միջանկեալ պարբերութիւնները՝ պատշաճ կերպով կէտերու կամ փակագծերու մէջ տա՛ փոփել, միով բանիւ, տպագրատան ուշիմ սրբագրապետի մը պաշտօնը կատարել... և ահա պիտի տեսնեա՛ որ այդ անիմանալի գրութիւնն պիտի պարզի՝ գրեթէ մանկան անգամ հասկացողութեան չափ զիրըմբռնելի լինելու, այդ մտաւոր արարչագործութեան թոհոհն՝ կարգ ըստ կարգի պիտի յղանայ, պիտի ծնանի անշունչ թղթին վրայ՝ կենդանի մտաց արարածներ, այնքան հիանալի՝ որչափ գիրըմբռնելի:

Բաժաններս բանաստեղծութիւնք չեն. առաջիկայ տողերուս ընթերցողք՝ իրենք ևս չառանձնաբար փորձ ունեցած պիտի լինին այս նշմարութեան. վստահ եմ որ ամէնքն ալ ինձ իրաւունք պիտի տան. և սակայն ո՞վ պիտի լինի այդ ծանօթ պակասութեան դարման տանողը, և որով եղանակաւ:

Յայտնի է որ առաջին պարտքն, և կրնամ ըսել նաև բացարձակ պարտքն այս մասին՝ կը վերաբերի հայ լեզուի ուսուցչաց. որք առօրականէն աւելի ուշադիր պէտք է լինին՝ տղայոց և պատանեաց գրաւոր դասերու մէջ՝ ի գործ դրած կիտաղրութեանց. բացատրել և անդրադարձնել իրենց՝ ընտանի և պարզ օրինակներով իւրաքանչիւր կէտի զօրութիւնն և պաշտօնն ի գրութեան. ոչ երբեք այս մասին խստապահանջ լինելէ ետ կենալ. վասն զի յարատեւութեան և երկայնամտութեան ձեռքով միայն յաղթութիւն կը ստացուի: Երբ աշակերտք այս կերպով ի մանկութենէ վարժին ուշադրութեան առնուլ իրենց գործածած կիտաղրութիւնն, և անոնց իւրաքանչիւրին զօրութիւնն ըմբռնել գործնականապէս, այնուհետև հասակի զարգացման հետ՝ տղայական տնհոգութիւնն և անուշադրութիւնն ևս կ'անհետանայ, և լաւ կիտաղրութեան կարեւորութիւնն ըմբռնելով՝ այլ ևս նոցա շարադրածներն խրթնութիւն և մթութիւն պիտի չպարունակեն: Այս նպատակիս հասնելու համար, յայտնի է, բաւական չէ վարժապետք դո՛հ լինին աւանդելու տղայոց համառօտիւ, քանի մի բառերով, երկու կամ առ առաւելն երեք օրինակներով, ինչ որ ընդհանրապէս քերականութեանց սկիզբը և կամ վերջը վեր ի վերոյ բացատրութեամբք այս մասին կ'աւանդուի. այլ հարկ է անհրաժեշտ որ ստէպ ստէպ տրամաբանական լուծումն կատարել տան, և միանգամայն առանց կէտերու հատուածներ աւանդեն նոցա, պարտաւորելով ըստ պահանջման իմաստից՝ ուղղապէս կէտադրելու, և կամ սխալ կիտաղրութեամբ յօգուածներ առջնին դնել, զորս ըստ պատշաճին ուղղեն: Այս և ասոնց նման փորձառական յարատեւ ջանքը միայն՝ հնար է ապագային մէջ յուղիղն վերածել՝ այժմեան ժամանակի ազգային հրատարակութեանց մեծագոյն մասն, և այսու, ներքն ընթերցողք ըսելու, առաւելագոյն օգտաւէտ արդիւնք յառաջ բերել, քան թէ ժամավաճառ լինելով՝ երկար վիճաբանութեանց նիւթ ընել յայնժամ և յորժամ մակարայի մը կամ շողկապի մը խնդրոց նման անօգուտ բանավէճներ:

Փափաքելի էր ինձ երկարօրէն և մանրամասն անդրադարձութիւններ ընել այս մասին, փորձառական օրինակներով. բայց Բաղմալիպիս էջերն և ուղղութիւնն չեն ներեր ինձ յօդուածիկա՞դ պրոցական դասատուութեան մի վերածելու: Ուշիմ վարժապետաց յարատեւ ջանից և նախաձառորութեան կը յանձնեմ այս գործնական մասը, որոյ զանազան կերպերը քիչ մը վերը յիշատակելի: Չեմ ուզեր դար-

ձեռք առ 'ի հաստատութիւն բանիցս' քաղուածօրէն շարել այս տեղ
և ուղղել բազմաթիւ կամ սակաւաթիւ օրինակներ սխալ կիտաղրու-
թեանց՝ մեր այժմեան ազգային ծանօթ գրիչներու յօդուածներէն
կամ մատեաններէն, իսկ անծանօթից կամ աննշան և ինքնակոչ յօ-
դուածագիրներու մասին՝ կ'ուղարկեմ զհմուտս, ըստ բախտի ընտ-
րուած՝ որ և իցէ սիւնակ մի կարգալու ազգային օրագիրներու,
ուսումնաթերթերու կամ հանգէտներու, և այլն. յորս առաւել քան
զբաւականն ընդ առաջ կ'եննեն նոցա այդօրինակ սխալագիր, երկ-
բայական և թարմատար կիտաղրութիւնք:

Ուստի վերջ տալով խօսքերուս, կ'աւանդեմ ազգային պատա-
նեաց սերտելու 'ի բերան, և զգոյշ կալ 'ի հետագայ անիծից' ան-
շունչ այլ խօսուոն փոքրիկ շորս կէտերուն:

✓ ԲՈՒԹ ԵՄ. պաշտօնս է՝ դիմաւոր բայ մի զատել գերբայէն,
Եւ կամ թէ բառ մ' իսկ յիւր դրացւոյն, ուր միտք բանին երկխօս են.
Մի գիտ գըծեր՝ երբ աւարտի մաս մի միայն իմաստից,
Բայց ուր և եթ' մի կամ երկու բառեր կազմեն փակագիծ:

ՍՏՈՐԱԿԵՍ ԵՄ. ինձ կ'իյնայ մաս մ'իւր ամբողջ իմաստէն
Ազատ պահել, երբ ինծմէ վերջ եկող բառերն ինձ ազդեն՝
Թէ կայ մասունք մ'ալ գեռ խօսքի, որ պի լինի մասնակից,
Հաղորդելու ընթերցողին զամբողջութիւն իմաստից:

ՄԻՋԱԿԵՍ ԵՄ. ինձ պատկանի կանգնիլ պատուար ամրալէն՝
Երկու անջատ՝ բայց մէկ իմաստ կազմող մասանց յարակից.
Կամ բաժնելու վրկայութիւն մի մէջ բերուած՝ իբր 'ի գէն'

Ի ԵՐԲԱՅԱՆ կամ արտաքին հեղինակաց մատենից:
Հուսի՛ վԵՐՋԱԿԵՍ ԵՄ, և ինծմով խօսքի դռներըն փակ են.
Անէ՛ծք 'ի գրիչըդ՝ սեփական մեր իբրաւանց խառնակիչ:

Հ. Ա. ՏԻՐԱՅԵԱՆ

